Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 01

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ք. Գավառ **31.01.2024թ. ժամը 12.00**

Նիստը նախագահում էր ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը, մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզի խորհրդի 7 անդամներից 6-ը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հրավերով մասնակցում էին ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սևակ Խլղաթյանը, մարզպետի խորհրդականներ Ալբերտ Աղեկյանը և Ջանիկ Բազեյանը, մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարները և «Գեղամա աշխարհ» մարզային թերթի գլխավոր խմբագիր Խոսրով Խլղաթյանը:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների 2023 թվականի սեփական եկամուտների հավաքագրման տարեկան արդյունքների մասին:

   /Զեկ. Յուրա Մուշեղյան - մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ/

2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2023 թվականին իրականացված սուբվենցիոն և անհետաձգելի ծրագրերի մասին:

   /Զեկ. Սասուն Սահակյան - մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

3. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2023 թվականին գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության ոլորտում իրականացված աշխատանքների մասին:

   /Զեկ. Անդրանիկ Ջրաղացպանյան - մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետի պարտականությունները կատարող/

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի՝ այդ թվում նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Գեղարքունիքի մարզում ապաստանած ազգաբնակչությանը 2023 թվականի ընթացքում մատուցված

առողջապահական ծառայությունների և սոցիալական ապահովության ոլորտում իրականացված աշխատանքների մասին:

/Զեկ. Լուսինե Վարդանյան - **մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ**

5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2023 թվականին համայնքային ենթակայության նախադպրոցական և արտադպրոցական ուսումնական հաստատություններում կամավոր ատեստավորման մասնակցող մանկավարժների հետ իրականացված աշխատանքների մասին:

/Զեկ. Կարեն Զազյան- մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ/

6. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում 2023 թվականի ընթացքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության, համայնքային ծառայողների և ՀՈԱԿ-ների տնօրենների պաշտոնի համար հայտարարված մրցույթների, աղբահանության կազմակերպման և աղբավայրերի կառավարման ընթացիկ վիճակի մասին:

/Զեկ. Վանիկ Հարությունյան - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ/

7. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության կողմից 2023 թվականի ընթացքում իրականացված աշխատանքների մասին:

/Զեկ. Մարինե Գյարզոյան - մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության **վարչության պետ/**

8. Այլ հարցեր:

Հայտարարությամբ հանդես եկավ՝

Մարատ Ղուրշուդյանը - Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի

քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության հողաշինության բաժնի պետ

Մարզի խորհրդի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը և բարձր գնահատեց մարզի համանքների ղեկավարների և համայնքների աշխատակազմերի կողմից 2023 թվականի ընթացքում կատարած աշխատանքները:

1. Առաջարկվեց Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝

1) աշխատանքներ տանել 2024 թվականի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշները ըստ համամասնությունների տարվա կտրվածքով ապահովելու համար.

2) շարունակական վերահսկողություն իրականացնել մարզի համայնքներում իրականացվող տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված քաղաքաշինական և սուբվենցիոն ծրագրերի կատարման ընթացքի, ժամկետների և իրականացվող աշխատանքների որակի նկատմամբ: Այլ գերատեսչությունների կողմից համայնքում իրականացվող շինարարական ծրագրերի նկատմամբ մշտադիտարկում իրականացնելու նպատակով նշանակել պատասխանատուներ, ովքեր համապատասխան բնակավայրի վարչական ղեկավարի մասնակցությամբ կներկայացնեն ամսական տեղեկատվություն կատարվող աշխատանքների ընթացքի մասին.

3) համայնքային ենթակայության նախադպրոցական հաստատությունների տնօրեններին և բուժքույրերին առաջարկել ամենօրյա վերահսկողություն իրականացնել տրամադրվող սննդամթերքի որակին՝ առաջնորդվելով ՀՀ առողջապահության նախարարության համապատասխան իրավական ակտերի պահանջներով: Միաժամանակ բացատրական աշխատանքներ իրականացնել սաների ծնողների հետ պլանային պատվաստումների քանակը և տեսակարար կշիռը ավելացնելու նպատակով.

4) մարզպետի աշխատակազմի համապատասխան պաշտոնատար անձանց մասնակցությամբ կազմակերպել հանդիպում համայնքային ենթակայության կրթական հաստատությունների մանկավարժների հետ և իրազեկել ատեստավորման կարգի մասին՝ առաջարկել մասնակցելու ատեստավորմանը:

5) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքներում աղբահանության կազմակերպման և աղբավայրերի կառավարման ընթացիկ աշխատանքներն իրականացնել ղեկավարվելով ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 4-ի N 27-Ն «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյություն ունեցող և գործող աղբավայրերի շահագործման, բարեկարգման ու փակման նվազագույն նորմերը» որոշման պահանջներով՝ միաժամանակ ապահովելով համայնքի բոլոր տնտեսվարող սուբյեկտների և քաղաքացիների հետ աղբահանության պայմանագրերի կնքումը:
Աղբահանության ցածր սակագներ սահմանած համայնքներում իրականացնել աղբահանության վճարների սակագների վերանայում:

6) ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունից համայնքապետարաններին տրամադրվելիք Սևան ազգային պարկի սահմանների էլեկտրոնային քարտեզները քննարկել մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանման մասնագետների մասնակցությամբ՝ հետագա սահմանազատումներն իրականացնելու նպատակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Сертификат отозван

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Подписано: SARGSYAN KAREN 3710840503

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ